

Հավանաբար, մեծ տաղանդն էր պատճառը, որ կյանքից վաղաժամ հեռացած Ալեքսանդր Հարությունյանի արվեստը խորը ազդեցություն է թողել թբիլիսյան շատ երիտասարդ լուսանկարիչների աշխատանքների վրա: Հարությունյանի յուրաքանչյուր լուսանկարը դիտողի համար գյուտ է, նրանում մենք տեսնում ենք հոգեհարազատ կերպարներ. դա հին Թիֆլիսն է, նրա բնությունը, աշխատասեր մարդիկ: Նրա լուսանկարները սոցիալական մեծ լիցք ունեն: Նրանք կարծես ասում են մեզ, որ կյանքը հենց սա է, որով պիտի ապրենք մենք բոլորս, չենթարկվելով անողոք դիպվածին, որը մեզ կկանգնեցնի բարու և չարի երկընտրանքի առջև:

Ալեքսանդր Հարությունյանի լուսանկարները գրավում են գեղարվեստական վարպետությամբ, խորը մարդասիրությամբ, ուր միաձույլ հանդես է գալիս կյանքի դառնությունների և ուրախությունների ըմբռնումը:

Թբիլիսին հավերժական և անսպառ աղբյուր է բանաստեղծի, նկարչի, երաժշտի համար: Նա ներշնչում է նաև լուսանկարիչներին: Քաղաքի փողոցները, տները, պատշգամբները փայտե և թուջե ժանյակները Հարությունյանը ներկայացնում է այնպես, որ կարծես լսում ես գծերի, ուրվանկարների, նախշերի երաժշտությունը: Տունը ոչ թե ուղղակի տուն է, այլ Թբիլիսիի կերպարը, նրանում երևում են ժողովրդի պատմությունը, մարդկային ճակատագրերը:

Անթիվ են Ալեքսանդր Հարությունյանի դիմանկարները: Թվում է կարդում ես ծեր կախեթցու, դռնապանի, ջահել պարուհու և նկարչի կյանքի էջերը, զգում նրանց հարուստ ներքնաշխարհը: Դիտողականությամբ և նրբազգացողությամբ օժտված լուսանկարիչն օգնում է ճանաչել ճակատագրեր, բնավորություններ, տարբեր ազգերի, մասնագիտության պատկանող մարդկանց հոգեբանությունը, համոզելով, որ նրանք արտասովոր են ու նշանավոր:

Հարությունյանը հսկայական գործ է կատարել: Նա թողել է մոտ քսան հազար, թերևս ավելի սևանկար (նեգատիվ), որոնք սպասում են իրենց հրատարակողին:

ԻՐԻՆԱ ԶՈՒՅՑՈՎԱ

Ալեքսանդր
Հարությունյան





# Թբիլիսիի հայ լուսանկարիչները

